

Տ. Եւրիստովիս

# ՈՒՐԱԽ ՀՐԱՅՐԸ

ՅԵԿ

ՍԱԳԻ ՍԱՅԼԲ



ՊԵՏԱՐԱԾ 1936 ՅԵՐԵՎԱՆ


Հ. Մելքոնյան

Հ 36-Ն  
ՀԱՅԿ 7  
891.995  
2-30

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՐԱԽ ՀՐԱՅՐԸ  
ՅԵՎ  
ՍԱԳԻ ՍԱՑԼԸ

ՇՈՊԻԿԸ ՅԵՎ ՆԿՈՐՆԵՐԸ  
Ա. ՄԱՆՈՒԺԱՐՅԱՆԻ



Հ Ս Խ Հ  
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Բ Ռ Ը Ո Ւ Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 0 1 9 8 6

Պատ. Խմբ. Սիրաս  
Տեխն. Խմբ. Տ. Խաչվանեյան  
Մրգագիշ Հ. Դոլուխանյան



Քլավիժակ լիազոր Կ. 278, պատվեր 551  
Հրատ. 3678, տիրած 5000  
Պետհաստի տպարան  
Յերեվան, Ա Գնունի № 4



Հանձնված և արտադրության 1 ապրիլի 1936 թ.  
Ստորագրված և տպելու 11 մայիսի 1936 թ.

ԳԻՆԸ 85 ԿՈՐ.




56723-66

Ա. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
ՎԵՍԵԼԻЙ ՌԱЙՐ Ի ԳՈՒՍՅԱ ՏԵԼԵՋԿԱ

Գիշ ՀՀ Արմենիա, Էրևան



Մեր Հրայրը  
Քաջ ու սրտոտ,  
Պետք ե գնար  
Տատիկի մոտ.  
Մի գիրք եյին  
Տգել ընծառ,  
Ուզում եր, վոր  
Տատին ցույց տա,  
Ազատ որվա  
Նախորյակին,  
Գիրքը դրավ  
Գլխատակին,




Մաքուր սրբեց  
 Շորն ու գոտին  
 Դրեց իրա  
 Թաղթի մոտին:  
 Լույս ու մութը  
 Չբաժանված,  
 Իր մայրիկին  
 Կանչեց, ասաց.  
 — Դե, մայրիկ ջան,  
 Քնում եմ յես,  
 Ծեգ ու ծեզին  
 Իմաց կանես:

Պիտի շուտով  
 Գնամ ու գամ.  
 Հավաքույթ կա  
 Յերեկոյան:  
 Ամառվա տաք,  
 Այլող որ ե,  
 Գնալ — գալը  
 Շատ դժվար ե:

2

Առավոտյան  
 «Կի — կի — կի — կի,  
 Հրայր, վեր կաց,





Շորդ հագի».

Աքլորը պինդ  
Զայնով կանչեց,  
Մեր Հրայրին  
Տեղից հանեց:  
— Դե, մայրիկ ջան,  
Գնում եմ յես:  
— Հրայր, բալես,  
Զգուշ լինես.  
Ավտոների  
Տակ չընկնես:  
Տատիկին ել  
Իմ բերանից  
Հազար — հազար  
Բարև կանես:  
— Ի՞նչ ես ասում,  
Մայրիկ, դու յել,

Ավտոյի տակ  
Ի՞նչ գործ ունեմ:  
Ենպես ուրախ  
Գնամ ու գամ,  
Վոր բոլորն ել  
Զարմանան:  
Տատի տունը  
Շատ մոտիկ ե —  
Անտառի մոտ,  
Բլրի տակ ե:

3

Եսպես շուտով —  
Ծեղ ու ծեղին —  
Ընծա գիրքը  
Կոան տակին,  
Մեր Հրայրը  
Արագ քայլով  
Անց եր կենում  
Լայն գաշտերով:  
Առավոտ եր  
Վառ ու սիրուն,  
Հովս եր խաղում  
Լայն գաշտերում:  
Գետն եր հոսում,  
Որոր ասում,  
Յեփ անտառը  
Կամաց խոսում:  
Դեղին արտեր,  
Կանաչ խոտեր,  
Կոլխոզնիկի  
Ուրախ յերգեր:

Յերեք հնձող  
Մեքենաներ  
Մըցում եյին  
Հայտարարել:  
Ուրախ-ուրախ  
Փափս գեմքին,  
Ընծա գիրքը  
Կոան տակին  
Թայլում եր նա  
Ազատ դաշտում,  
Յեվ ամեն ինչ  
Նայում, դիտում:  
Մի թփի մոտ  
Կանգ առավ նա,  
Վոր հաց ուտի,  
Հանգստանա:  
Թփի տակին  
Մի լավ շնիկ,  
Կլոր, ինչպես



Բրդի կծիկ,  
 Կուչ եր յեկել  
 Ու վազստում,  
 Յեղ կարծես թե  
 Հաց եր ուզում:  
 Գրպանիցը  
 Մի կտոր հաց  
 Տվեց շանը,  
 Շոյեց, ասաց.  
 — Սոված ես, հա՞,  
 Դե, վեր առ կեր,  
 Հետս արի,  
 Դառնանք ընկեր:  
 Դե շուտ արա,  
 Նազ մի անի.  
 Տառս պիտի  
 Փլավ անի:  
 Թե վոր նրա  
 Տունը հասնես,



Ճափ բուդը  
 Կտամ յես քեզ:  
 Բա անունդ,  
 Միրուն շնիկ,  
 Յես ի՞նչ դնեմ:  
 Հա, Դիւդիլիկ:  
 Դիւդիլիկ ջան,  
 Արի, արի,  
 Ճամպեն մոտ ե,  
 Մի ալարի:

¶

Կամըջի մոտ,  
 Ճամպի տակին,  
 Նա հանդիպեց  
 Մի բրիգադի:  
 Յերեք պիոներ  
 Վզկապներով,  
 Անցնում եյին  
 Են դաշտերով:  
 — Բարե՛ բարե՛,  
 Պիոներներ:  
 Եղ ի՞նչ շուտ եք  
 Դաշտ գուրս յեկել:  
 — Դուրս ենք յեկել  
 Ծեղ ու ծեղին,  
 Նայենք, հսկենք  
 Ցորնի բերքին:  
 Զար թշնամի,  
 Կուլակ, տերտեր,  
 Մեր գյուղերում  
 Պակաս չեն դեռ:



— Յես ել ձեզ պես  
 Վոր մեծանամ,  
 Բերքի պաշտպան  
 Պիտի դառնամ:  
 — Իս դու ուր ես  
 Գնում եղանակ:  
 — Դարձել եմ յես  
 Գերազանցիկ,  
 Տվել են ինձ  
 Մի սիրուն գիրք:  
 Եղ լավ, սիրուն  
 Գիրքը հիմի  
 Տանում եմ, վոր  
 Տատս տեսնի:  
 Տատիս գյուղն ել,  
 Հրեն, մտիկ...

— Կեցցես դու քաջ  
 Հոկտեմբերիկ:  
 Վոր գնում ես,  
 Ճամպեն գիտես:  
 — Մի անգամ եմ  
 Յես գնացել,  
 Ճանապարհը  
 Չեմ մոռացել:  
 — Ի՞նչ լավիկն ե  
 Եղ քո շունը:  
 Դա յել ե գնում  
 Տատիդ տունը:  
 — Շան անունը  
 Դիլդիլիկ ե,  
 Շատ սրամիտ  
 Ու խելոք ե:

Դե, յես գնամ,  
Շուտ պիտ դառնամ.  
Հավաքույթ կա  
Յերեկոյան։

5

Դիւղիլիկն  
Ու չըայըը  
Շուտով հասան  
Գյուղի ծայրը։  
Անցան կանաչ  
Բլրի տակով,  
Արագահոս  
Գետի կողքով,  
Ցածլիկ պատից  
Թուան տակը,  
Մտան տատի  
Կանաչ բակը։  
Սագիկները  
Որոր — շորոր,  
Պատել եյին  
Տատի բոլոր։  
Տատիկն ել մի  
Մեծ ամանից  
Սագիկներին  
Կեր եր տալիս։  
Հենց վոր հանկարծ  
Տղին տեսավ,  
Թմերը բաց  
Վրա հասավ,  
Գրկեց, պաչեց  
Ջուխտակ թուշը,



Գոչեց. — Բալաս,  
Իմ անուշ,  
Եղ վհնց յեղավ  
Յեկար ինձ մոտ,  
Անուշ բալա  
Քաջ ու սրտոտ։  
— Դարձել եմ յես  
Գերազանցիկ,  
Ընծայել են  
Մի սիրուն գիրք։  
Գիրքն ել ես ե,  
Տատի ջան, տես.


ԲԵՐԵԼ ԵՄ ՔՌ  
 ԱՀՔՈՎ ՄԵՍՆԵՍ:  
 — ԹԵզ ԵԼ ՄԱՏԱՂ,  
 ՔՌ ԳՐՔԻՆ ԵԼ.  
 ԵՍ ԲՆՀ ԽԵԼՈՔ  
 ԲԱՆ ԵՍ ԱՐԵԼ:  
 ԴԵ ԳՆԱՆՔ ՄՊՈՒՆ,  
 ԱԳԻՂ ԲԱԼԵՍ,  
 ՆԱՏԻՐ ՉՊՈՒՆՀ ԱՌ,  
 ՀՈԳՆԱԾ ԿԱԲԻՆԵՏ:



56423-66


551—2

ԴԵ ԳԻՐՔՊ ՄՊՈՒՐ  
 ՏԵՍՆԵՄ, ՋԱՆԻԿ:  
 ԲԱ ՍԱ ԻՎ Ե,  
 ԻՄ ԱԲՐՈՒՆԻԿ:  
 — ՊԱՎԼԻԿՆ Ե ՊԱ —  
 ՄՊՈՂՊՈՎԸ —  
 ՍԻԲԻՐԻ Քաջ  
 ՊԻՈՆԵՐԸ,  
 ՎՈՐԻՆ ՎԱՂՈՒՅ  
 Սպանել ԵՆ  
 ԻՐԵՆԸ Գյուղի  
 Կուլակները:  
 — Փշանան ԵԴ  
 Կուլակները.  
 Կրակ տվին  
 ՄԵՐ ԳԵՎԵՐԸ:  
 — ԵԴ ՊԱՎԼԻԿԸ,  
 ՎՈՐ ԱՍԱցի,  
 Շատ սրտոտ ԵՐ  
 Ու ԽԵԼԱցի:  
 Թշնամին ԵՐ  
 ՆԱ ԿՈՒԼԱԿԻ,  
 Պահապանը  
 Կոլխոզ բերքի:  
 Դրա համար  
 Ամեն պիոներ  
 Ուզում Ե Քաջ  
 Պավլիկ լինել:  
 — ՅԵՍ ԵԼ ընծա  
 ՊԵՄՔ Ե ՄԱՄ ՔԵՂ  
 Ի՞ՆՀ ԵՍ ՈՒզում,  
 Ասմ, բայես:




— Են սագերից  
 Մեկը տուր ինձ:  
 — Վորը կուզես,  
 Սպիզ բալես:  
 Ասա, տեսնեմ  
 Վհնց կտանես:  
 — Յես կտանեմ,  
 իմ լավ տատի,  
 Դրա մասին  
 Մի մտածիր:  
 — Խոհանոցում  
 Մի կողով կա  
 Ամուր շինված,  
 Լայն ու յերկար:  
 Սագը դնեմ  
 Կողովի մեջ,  
 Վոր դու տանես  
 Թեթև ու հեշտ:  
 Իսկ քո շանը  
 Յես ծանոթ չեմ.  
 Բա անունը  
 Ինչպես կանչեմ:  
 — Շան անունը  
 Դիլդիլիկ ե,  
 Շատ խմասուն  
 Ու խելոք ե:  
 Դիլդիլիկ ջան,  
 Արի, արի,  
 Տատի համար  
 Մի քիչ պարի:  
 — Դիլդիլիկը

Վհրն ե, բալես,  
 Մի լավ անուն  
 Զկա դնես:  
 Այ ապրես դու,  
 Հրայր, բալես,  
 Միշտ ել այգպես  
 Ուրախ լինես:  
 Մենակ եմ յես  
 Տարին բոլոր,  
 Մնա ինձ մոտ



Մի քանի որ:  
— Վնաց կլինի,  
Վոր յես մնամ,  
Հրես շուտով  
Պիտի գնամ.  
Հավաքույթ կա  
Յերեկոյան:  
— Խոսքով ոնսան.





Զեռքն առած,  
 Գոչեց. — «Նո՞, նո՞,  
 Հրեղեն սագ,  
 Վազիր, գնա  
 Արագ-արագ»:  
 Դիլոհիկն ել  
 Նրա յետքից  
 Արագ-արագ  
 Վազ եր տալիս:  
 Մին վազում եր,  
 Մին ել նստում,  
 Դունչը ցցում  
 Ու մնատում:  
 Ախր պստիկ

Շնիկ եր նա.  
 Եղքան ճամպա  
 Ինչպէս գնար:  
 Մի յերեխա  
 Գյուղի ծայրին  
 Տեսավ սագին  
 Ու Հրայրին,  
 Գոչեց. — «Տղերք,  
 Սագի սայլը,  
 Շուտով յեկեք  
 Գյուղի ծայրը»:  
 Հեռու, մոտիկ  
 Փողոցներից  
 Մի նայեցեք  
 Վանց են գալիս:  
 Գալիս են ու  
 Նայում սայլին,  
 Հնարագետ  
 Մեր Հրայրին:  
 Իսկ Հրայրը  
 Ուռած, փքված,  
 Գոտի սանձր  
 Զեռքին բռնած,  
 Մարակում ե,  
 Քշում իր ձին,  
 Ել չի նայում  
 Դար ու փոսին:  
 — Ե՞յ, տղաներ,  
 Հեռոն, հեռոն,  
 Շատ ճանապարհ եմ  
 Գնալու:  
 Իմ ձին, գիտեք,

Հրեղեն ե,  
 Սայլն ել, տեսէք,  
 իր վրեն ե:  
 Մի խանզարեք,  
 Թողեք գնամ.  
 Հավաքույթ կա  
 Յերեկոյան:  
 Դիլդիլիկ ջան,  
 Արի արի,  
 Ճամպեն մոտ ե,  
 Մի ալարի:

3

Եսպես անցան  
 Դաշտի միջով,  
 Ու գետակի  
 Նեղ կամրջով,  
 Մին ել ճամպին  
 Դիլդիլիկը  
 Հանկարծ ցցեց  
 Իր դնչիկը,  
 Գետնին նստեց  
 Ու վսպտաց,  
 Թե՝ Հրայր ջան,  
 Մի քիչ կամաց:  
 Ախր պստիկ  
 Շնիկ եմ յես,  
 Վոտս ցավեց,  
 Հերիք վաղես:  
 — Հոգնել ես, հա,  
 Իմ լավ ընկեր,  
 Շատ ճանապարհ ես



Դու յեկել:  
 Արի գնեմ  
 Սայլի միջին,  
 Հանգստանաս՝  
 Ելի իջիր:  
 Հանկարծ դաշտից  
 Մի պիոներ  
 Բարձր գոչեց.  
 — Եհեյ, ընկեր,  
 Ուր ես գնում,  
 Հլա մի կաց:  
 Յեկել ես վոր  
 Շնուն գողանաս:  
 — Լավ ճանաչիր  
 Դու ինձ, ընկեր.  
 Յերբեք մի բան  
 Չեմ գողացել:

Սոված, ծարավ  
Թփի տակին  
Վնդատում եր  
Նա դառնագին:  
Հետս տարա  
Տատիկի մոտ,  
Տվի մի մեծ  
Ճռտիկի վոտ...  
— Դե լավ, դե լավ,  
Հանաք արի,  
Ես անդամին  
Դու ինձ ների:  
Եղ պուճուրիկ,  
Միրուն շունն ել  
Մեր կոլխոզից  
Լինի նվեր:

8

Յերբ իջել եր  
Մթնշաղը  
Նրանք հասան  
Իրենց գյուղը:  
Տեսնելով են  
Սագի սայլը,  
Մի յերեխա —  
Գիտ Զարմայրը,  
Գոչեց. — Հրեն  
Մեր Հրայրը,  
Առաջն արած  
Սագի սայլը:  
Վազեք շուտով,  
Յեկեք, հասեք,

Յեկեք, տեսեք  
Ու զարմացեք:  
Հեռու, մոտիկ  
Փողոցներից  
Մի նայեցեք  
Վրնց են գալիս:  
Գալիս են ու  
Նայում սայլին,  
Հնարագետ  
Մեր Հրայրին:  
Իսկ Հրայրը  
Ուռած, փքված,  
Գոտի-սանձը  
Զեռքին բռնած,  
Մտրակում ե  
Զի — սագիկին,  
Վոր շուտ հասնի  
Իր մայրիկին:  
— Ի՞նչ ես արել,  
Հրայր, բալես,  
Ել մի ուրիշ  
Ոյին չունեմ...  
Սաաց, վազեց  
Տղին գրկեց,  
Ու թշերը  
Մի պինդ պաշեց:  
— Նայիր, մայրիկ,  
Ես սագիկը  
Նվեր տվեց  
Մեր տատիկը,  
Ես պստիկ  
Միրուն շունն ել




Կոլխողից են  
 Նվեր տվել:  
 Շան անունն ել  
 Դիլդիլիկ ե,  
 Շատ սրամիտ  
 Ու խելոք ե:  
 — Այ ապրես դու,  
 Հրայր, բալես,  
 Միշտ ել այդպես  
 Ուրախ լինես:

— Բա չասացի՞  
 Յես գնալիս,  
 Ու քեզանից  
 Հեռանալիս.  
 Ենպես ուրախ  
 Գնամ ու գամ,  
 Վոր բոլորն ել  
 Զարմանան:  
 Դե, դիլդիլիկ,  
 Իմ լավ շնիկ,  
 Զվարտանա,  
 Խելոք մնաս:



Մայրիկի մոտ  
Հանգիստ նստի--  
Յես գնում եմ  
Հավաքույթի:  
Սրբեց շորը,  
Կապեց գոտին,  
Գնաց դպրոց  
Հավաքույթի:



626

10449

ԳԻՒԸ 85 ԿՈՊ.

77

1  
2



Ա. ԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
ՎԵՍԵԼԻ ՌԱЙՐ Ի ՂՈՅԱ ԹԵԼԵՋՔԱ  
Գև ՀՀ Արմենիա, Էրևան

